ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի պրոֆեսոր, գիտությունների դոկտոր

ՎԱՉԳԵՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության հայցորդ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԱՐԱՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Անցումային հասարակության սոցիալ-տնտեսական դժվարությունների հաղթահարումը բիզնես միջավայրում մասնագետից պահանջում է անձնային որակների առանձնահատուկ օժտվածություն: Հոդվածում փորձ է արվում հետազոտական ճանապարհով բացահայտել գործարար միջավայրի յուրահատուկ դժվարությունները, ինչպես նաև դրանցում գործարար անձանց արդյունավետության ապահովման սոցիալ-հոգեբանական դետերմինանտները: Հետազոտության հիման վրա ուրվագծվել է արդյունավետ գործարարի հոգեբանական դիմանկարի բաղադրամասերը:

Հանգուցային բառեր և հասկացություններ՝ փոխակերպվող հասարակություն, նյարդահոգեկան լարվածություն, ֆունկցիոնալ վիճակ, ֆունկցիոնալ հնարավորություններ, հոգեբանական նկարագիր:

Անցումային (փոխակերպվող, հետինդուստրիալ) հասարակությունը իրեն բնորոշ սոցիալ-հոգեբանական, քաղաքական, տնտեսական, բարոյամշակութային արժեքների անկայունության, դրանց հետ կապված՝ կյանքի թանկացումների ու հասարակության ներսում տեղի ունեցող անսովոր փոփոխությունների բնութագրերով ուղղակիորեն անդրադառնում է նրանում ապրող մարդկանց բոլոր հարաբերությունների վրա: Շուկայի օրենքների անկայունությունը, անցումային հասարակության մեջ իր դիրքում մնալու անհավասար պայմանները, տնտեսական օրենքների պարտադրանքները, կոշտ մրցակցությունը, դրամի արժեզրկման մեծ հավանականությունը, ապրանքների, հումքի աղբյուրների դեֆիցիտները գործարար անձանց պահում են մշտական լարվածության, տագնապի, տևական սթրեսի մեջ, որում արդյունավետ գործելու, հաջողություններ գրանցելու հնարավորությունները հայտնվում են վտանգի սպառնալիքների տակ[1,10]: ՀՀ սկսած անկախացման ժամանակներից մինչ օրս գտնվում է ճանապարհային ու ռազմական շրջափակման պայմաններում, ինչը առավել դժվարություններ

է ստեղծում երկրի ողջ ենթակառուցվածքների զարգացման վրա: Այդպիսի պայմաններում մրցակցության դիմանալու, գործունեության մեջ հաջողություններ գրանցելու գործընթացը ուղիղ կախվածություն ունի գործարար անձի հոգեբանական կերտվածքից, մասնագիտական պատրաստության աստիճանից, անձնային որակների առանձնահատուկ արտահայտվածության բնութագրերից: ՈՒստի "մարզավիճակում" մնալը գործարար անձանց համար հանդիսանում է գոյատևման կենսական պահանջ:

Ըստ Ա.Լեոնովայի՝ անկայուն միջավայրում անձի հոգեկան գործունեության արդյունավետությունը պայմանավորված է օգտակար արդյունքին ուղղված ենթահամակարգերի գործունեության ֆունկցիոնալ վիճակներից[7]: Ուստի՝անցումային հասարակությունում սեփական բիզնեսի զարգացման, գործունեության արդյունավետության պահպանման և վերը նշված պահանջների բավարարման համար, անհրաժեշտ են անձնային ու մասնագիտական բարձրակարգ հնարավորություններ: Կարծում ենք, որ ժամանակակից մարտահրավերների դիմակայման ու դրանցում հաջողությունների ապահովման գործընթացում առաջնային խնդիր է հանդիսանում բիզնեսմենի հոգեբանական բնութագրի բացահայտման հիմնախնդիրը:

Հետազոտությունը իրականացվել է 2013-2014թթ-ի ընթացքում: Աշխատանքների կաղմակերպումը ընթացել է երկու փուլերով. առաջին փուլում իրականացվել են փոխակերպվող հասարակությունում գործարար անձանց գործունեության արդյունավետության և նրանց հոգեկան ակտիվության վրա անդրադարձող գործոնների ազդեցության սոցիալ հոգեբանական հետևանքների, դրանց հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների բացահայտման հետազոտական աշխատանքները: Երկրորդ փուլում իրականացվել են կայուն եկամուտներ ունեցող գործարար անձանց սոցիալ-հոգեբանական նկարագիրը: Հետազոտական աշխատանքներին մասնակցել են Երևանի տարբեր առևտրական ձեռնարկությունների 300 գործարար անձիք/120 կին և 180 տղամարդ: Գործարարների հաջողությունների հիմքում ընկած հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման և դրանց գործառութային հնարավորությունների բացահայտման նպատակով՝ որպես հիմնական հետազոտական խումբ, ընդհանուր խմբից առանձնացվել են կայուն եկամուտներ ունեցող 90 հաջողակ գործարարների (45 կին և 45 տղամարդ): Հետազոտական երկու խմբերի հետ էլ զուգահեռաբար տարվել են գործարար անձի հոգեբանական նկարագրի հետազոտման միևնույն աշխատանքները: Հետազոտության ավարտից հետո ստուգիչ և հիմնական խմբերի հետազոտության արդյունքները համեմատվել են միմյանց հետ:

Անցումային հասարակությունում գործարար հարաբերությունները հանդիսանում են մարդկային հնարավորությունների դրսևորման առանձնահատուկ միջավայր, որոնցում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական, առևտրատնտեսական, բարոյա-հոգեբանական արժեքները հաճաակի ենթարկվում են փոփոխությունների [6]: Այս առումով՝ գոյություն ունեն բազմաթիվ տեսանելի ու քողարկված գործոններ, որոնք ուղղակիորեն անդրադառնում են ոլորտում գործող մարդկանց ակտիվության, նրանց նյարդային համակարգության, ինչպես նաև գործունեության ըմնդհանուր առաջընթացի վրա,: Անցումային հասարակությունում գործարարների գործունեության ու նրանց անձի վրա անդրադարձող

գացասական գործոնների ուսումնասիրման արդյունքները արտացոլված են թիվ 1 գծ-ում:

Ըստ հետազոտվողների կողմից առանձնացրած բացասական գործոնների կարևորման, որոնց ազդեցությամբ անձի նյարդային համակարգում առաջանում են տևական լարվածության ու յուրահատուկ հոգեվիճակների ֆոն (վախ, տագնապ, սթրես, նևրոտիկ երևույթներ, հենաշարժական համակարգի գործառութային խանգարումներ, և այլն), գործունեության արդյունավետության ցուցանիշների գնահատման առումով՝ ժամանակի մեջ դրանք ունեն խիստ բացասական ուղղվածություն: Օրգանիզմի ֆիզիոլոգիական մակարդաում դրանք դրսևորվում են անքնության, մղջավանջային երազների, կծկտուր քնի, ջարդրտվածության ու հոգնածության, ախորժակի կորստի ձևերով, օրգանիզմի ընդհանուր հյուծվածությամբ: Սիրտ-անոթային համակարգերում նկատվում են ֆունկցիոնալ հնարավորությունների անկում, անձի ընդհանուր ակտինության բնութագրերի փոփոխության ամբողջ համախտանիշներ: Բազմաթիվ հեղինակների կարծիքով դրանց անհետևանք թողնելը հանգեցնում է նստվածքային վտանգավոր երևույթների[3,9]:

Անցումային հասարակությանը բնորոշ աշխատանքային լարված պայմաններում այս կամ այն բնութագիրն ունեցող հոգեկան առողջության ցուցանիշները (դրանք արտացոլված են գծագրում) իրենց մեջ ամփոփում են նյարդային սպեցիֆիկ վիճակներ, որոնք միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվում են անհանդուրժողականության, հաճախ ա•բեսիվության, կոնֆլիկտայնության կամ անտարբերության ձևերով (սոցիալ-հո•եբանական •ործոններ) Որպես անբարենպաստ գործոնների հո•եբանական հակազդումներ՝ գործարարների շրջանում արտահայտված են աշխատավայրում և ընտանիքում միջանձնային լարված, կոնֆլիկտային հարաբերությունները վախը, տա•նապը, որնք զու•ակցվում են վերջույթների դողով, սրտի զարկերի հաճախականության մեծացմամբ, շնչառության ռիթմերի կտրուկ փոփոխությամբ, մարմնի ջերմաստիճանի կտրուկ տատանումներով: Սրանք հետագա դժվարությունների ծագման դեպքում նպաստավոր հող են հանդիսանում հուսահատություն, ընկճվածություն, ապա•այի նկատմամբ հոռետեսությյան, թերարժեքության, անկարողության, հան•ամանքներից մշտական կախվածության զ•ացման, կասկածի, մեկուսացածության, լքվածության անելանելիության, լարվածության զ•ացումների[4,5]:: Այսպիսի հո•եբանական հակազդումները զու•ակցվում են համապատասխան ֆիզիոլո•իական տեղաշարժերով: Դրանք են՝ •լխացավերը, օրվա տարբեր ժամերին մարմնում ջարդվածության զ•ացումն ու հո•նածությունը, տարբեր հիվանդությունների հետ կապված օր•անական ֆունկցիոնալ փոփոխությունները (սիրտ-անոթային, մարսողական համակարգերի գործառնության խախտումները և այլն), քնի խան•արումները (մակերեսային, ընդհատումներով քուն, մղձավանջային երազներ, անքնություն), մարմնի քաշի կտրուկ փոփոխություններ, ախորժակի բացակայություն, կամ գայլային՝ ախորժակի արտահայտվոծություն, մաշկի քոր, ուժասպառության զ•ացում և այլն:

1. Հասարակության անկայուն վիճակը, զարգացումների անորոշությունը	• Անորոշություն, նյարդահոգեկան լարվածություն, տագնապ • Անքնություն, հոգնածություն, ջարդրտվածություն
2. Օրենքների անկայուն, իրարա մերժ, հակասական բնույթը	• Լարվածություն, հակադրվելու, մերժողական տրամադրվածություն • Հոգնածություն, ախորժակի կորուստ, թմրության զգացում
3. Պաշտոնյաների քաշքշուկները, թղթավարության ու ձևակերպումների նկատմամբ սուբյեկտիվ պահանջները	• Հիասթափություն, վախ, անհանգստություն, փախուստի ցանկություն հուսահատություն • Ցրվածություն, գլխացավեր, գլխասլտույտ, մարմնում ջարդվածության զգացում
4. Շուկայի անկայունությունը, դրամի արժեզրկումը, հումքի ձեռքբերման դժվարությունները	• Նյարդային ճնշվածություն, հոռետեսություն, դյուրաբորբոքություն • հոգնածություն, հյուծվածություն, ջարդրտվածություն
5.Աշխատանքային ցածր մոտիվացիան, նեղ մասնագետների, պրոֆեսիոնալների բացակայությունը	• Սնանկանալու վախ, կասկած, տագնապ, անկարողության զգացում • Տարբեր հիվանդությունների արտահայտվածություն
6. . Սնանկացման հավանականությունը, գործազրկության վտանգը	• նյարդայնություն, դյուրաբորբոքություն, անհանդուրժողականություն, անհամբերություն, դեպրեսիա, • հուսահատություն • քնի խանգարումներ, մաշկի քոր, վերջույթների դող, մարմնի քաշի կտրուկ փոփոխություններ, ախորժակի կորուստ, կամ <<այլային ախորժակ>>
7. Դրամի արժեզրկման հետևանքով ունեցած նյութական կորուստները	• ափսոսանք, վախ, տագնապ, կասկածամտություն • քնի խանգարումներ, մղձավանջային երազներ, ուշադրության կենտրոնացման, տեղափոխման դժվարություններ, մոռացկոտություն
8. Շուկայում անհավասար մրցակցությունը, անպաշտպանվածությունը	• տագնապ, վախ, կասկած, անզորության, անօգնականության, անելանելիության զգացում • մշտական դրդված վիճակ, սիրտ-անոթային համակարգի գործառության խանգարումներ, ուժասպառության զգացում
9. Երկրում բիզնեսի հեռանկարի անորոշությունը	• վախ, նյարդահոգեկան լարվածություն, հուսահատություն, անտարբերություն, տագնապ, կասկած • մարմնի քաշի փոփոխություն, արտաքին ազդակներին տրվող ոչ ադեկվատ, ոչ համարժեք հակազդումներ, ուշադրության կենտրոնացման դժվարություններ
10. Բիզնեսին պետական օժանդակության բացակայությունը	• վախ, նյարդահոգեկան լարվածություն, հուսահատություն, անտարբերություն, տագնապ, կասկած • անքնություն, մղձավանջային, տհաճ երազներ, աղեստամոքսային տրակտի խանգարումներ, մաշկի քոր, մարմնի քաշի փոփոխություններ

Անբարենպաստ գործոնների ազդեցության արտահայտվածությունը:

Սոցիալական, արտակարգ իրավիճակների, աշխատանքային հոգեբանության բնագավառներում կատարված հետազոտությունների վերլուծությունները ցույց են տալիս[2,8,10], որ միջավայրի բացասական գործոնները, անձի ընդհանուր առողջական վիճակի, ինչպես նաև հոգեկան ոլորտին անդրադարձող սթրեսորները արգելակում են անձի կոգնիտիվ համակարգության, հուզական

կայունության, ընդհանուր աշխատունակության գործառույթներն ապահովող համակարգերի գործունեությունը: Այդ օրինաչափությունների իմացությամբ ու դրանց կառավարման ունակություններով է պայմանավորված գործարարի կողմից բիզնեսում տեղի ունենալիք իրադարձությունների կռահումը, մրցակիցների նկատմամբ իրադրական և ռազմավարական ճիշտ ծրագրերի մշակումը, դրանց իրականացման գործընթացների հաջողությունը: Նշված հանգամանքների հաշվառմամբ օրգանիզմի վրա դրանց ազդեցության տեղաշարժերի վերահսկողությունը հնարավորություն կտա ապահովելու փոխակերպվող հասարակությունում գործարար անձանց գործունեության արդյունավետությունն ու հետագա հաջողությունների ամրապնդումը: “Դրանց ազդման տևողականությունը և ուժգնությունը առաջացնում են բացասական հույզերի յուրօրինակ ֆոն, ինչի հետևանքով խափանվում են օրգանիզմի օգտակար աշխատանքային համագործակցության գործառույթները, օրգանիզմի ընդհանուր և հոգեկան աշխատունակությունը, որով փոխվում են անձի դրդապատճառային համակարգի բովանդակային և ուղղվածության վեկտորները” [3,էջ35]:

Հետազոտվողների կողմից առանձնացվող անբարենպաստ •ործոնների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք ծագման առումով ունեն սոցիալ-հոգեբանական, տեխնիկական, կազմակերպչական, անձնային հիմքեր, դրանց առկայությունունու տևական ազդեցությունը առաջացնում է հետազոտվող համակազմի առաղջության, գործունեությանև դրա արդյունավետության համար խիստ բացասական հետևանքներ, ինչպես օրգանական, այնպես էլ վարքային մակարդակներում: Դրանց մշտական առկայությունն ու ազդման հաճախականությունը ար•ելակում են փոխակերպվող հասարակությունում հարմարվելու, արդյունավետ գործունեություն կազմակերպելու գործընթացը: Խոսքը վերաբերվում է գործարար անձի գործառութային հնարավորություններին, որոնք ապահովում են նրա գործունեության արդյունավետությունը: Գործունեության արդյունավետության և սեփական անձի վրա ազդող հավանական գործոնների, խանգարող հանգամանքների ճիշտ հաշվառումը, գործելակերպի անհրաժեշտ ռազմավարության ընտրությունը, սթրես գործոնների նկատմամբ գործարարի կայունությունն ու կոնֆլիկտային իրավիճակներում պարտնյորների գործողությունների, հավանական քայլերի կանխատեսումը հնարավորություն է տալիս ապահովելու հաջողությունների հասնելու ռեալ շանսեր:

Այսպիսով՝ փոխակերպվող հասարակության առանձնահատկությունների իմացությունը, դրանցում գործելու արդյունավետ ռազմավարության մշակումն ու օրգանիզմի հնարավորությունների ռացիոնալ օգտագործումը հնարավորություն կտա կանխավ խուսափելու հավանական վտանգներից, ձախողումներից, սնանկացումից ու առողջության կորստի վտանգից: Հենց անխափան ու արդյունավետ գործունեության կազմակերպման անհատական ոճի առանձնահատկությունների ձևավորման մեջ է թաքնված գործարարի կայուն և աճող հաջողությունների գաղտնիքը: Այն սերտորեն կապված է նաև անձի առողջական, հարմարման, ինտելեկտուալ հնարավորություններով, որոնց հետազոտությունների արդյունքները ամփոփվում են հաջորդ ենթաբաժնում:

Հետազոտվողների հետ արված պիլոտաժ հարցման շնորհիվ բացահայտվել են նաև հաջողակ բիզնեսմենի սոցիալ-հոգեբանական նկարագիրը: Հետազոտության արդյունքների վերլուծության արդյունքում հնարավորություն է ստեղծվել կառուցելու գործարար անձի անհրաժեշտ հոգեբանական նկարագիրը, որը սխեմատիկ կերպով արտա-

հայտված է նկ.թիվ 1-ում :

Հետազոտության արդյունքների վերլուծության արդյունքում ուրվագծվել է հարցվողների կողմից “հաջողակ գործարարի” հոգեբանական դիմանկարի հիմքում ընկած սոցիալ հոգեբանական որակների հոգեֆիզիոլոգիական համակարգը: Միևնույն ժամանակ վերլուծությունները ցույց են տալիս, որ հիմնական և ստուգիչ խմբերում ընդգրկված կանանց և տղամարդկանց հետաղոտության արդյունքների ցուցանիշներում գոյություն ունեն մի շարք հետաքրքիր օրինաչափություններ: Դրանք որպես կանոն բնորոշում են գործարար անձի հիմնական բնութագիրը և դրսևորվում հետևյալ անձնային և կազմակերպչական սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ամբողջությամբ

Նկ.թիվ1



Արդյունավետ գործարարի սոցիալ-հոգեբանական բնութագրի կառուցվածքային բաղադրամասերի սխեմատիկ պատկերը (ըստ էքսպերտ հարցումների տվյալների)

ա) հանդուգն գործելավոճի ու նրբանկատ, ստեղծարար որոշումների կայացման հեռանկարանությամբ, պարտնյորների ու կոլեկտիվի անդամների նկատմամբ դրսեվորող հանդուրժողականությամբ,

բ) իր գործի և կոլեկտիվի անդամների նկատմամբ բարձր նվիրվածությամբ. ապրումակցմամբ, հեղինակությամբ, շփվողականությամբ, անձնական խարիզմայով, նրբանկատությամբ, համբերատարությամբ, հանդուրժողականությամբ, արդարությամբ,

գ) պրոբլեմատիկ իրավիճակներում ցուցաբերվող մտքի ճկունությամբ, ստեղծարարությամբ, աշխատասիրությամբ զսպվածությամբ, կամային որակների բարձր արտահայտվածությամբ,

դ) գործունեության ընթացքում

գրանցած հաջողություններով, ձեռնարկության կայուն եկամուտների աճի ցուցանիշներով, կոլեկտիվի անդամների նրանց խնդիրների լուծման, կոլեկտիվներում կոնֆլիկտների, արտառոց դեպքերի լուծման հնարամտությամբ, արդյունքների, եկամուտների բաշխման արդարությամբ, աշխատավարձների վճարման, արձակուրդների ժամանակին տրամադրման վստահելիությամբ,

ե) ապագայի նկատմամբ ունեցած լավատեսությամբ, կոլեկտիվում մշակութային միջոցառումների, անձնական հավաքների կազմակերպման ավանդույթների ստեղծմամբ, խրախուսանքների կիրառման ու կոլեկտիվի անդամների նկատմամբ տարվող կադրային ճիշտ քաղաքականության կիրառման (աշխատակիցների ժամանակին առաջխաղացում, նրանց հնարավորություններին համապատասխան պաշտոնների առաջադրում և այլն) և այլն:

Նկարում պատկերված գործարար անձանց կոգնիտիվ հնարավորությունների, կամային հատկանիշների, սոցիալ-ոգեբանական, մասնագիտական առանձնահատկությունների արտահայտվածությունն ու ըստ առաջնության գնահատման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ

ա) հարցվողները գործարարի հաջողության հասնելու անհրաժեշտ որակների մեջ կենտրոնական, առաջին տեղը, հատկացնում են նրանց կոգնիտիվ հնարավորություններին,

բ) երկրորդ տեղում նրանք կարևորում և նշանավորում են անձի կամային հատկանիշները,

գ) երրորդ տեղում կարևորում են գործարարի մասնագիտական որակները,

դ) չորրորդ տեղում կարևորվել են գործարարների սոցիալ-հոգեբանական առանձնահասկությունները,

ե) հինգերորդ տեղում նրանք կարևորել են անձի սոցիալ-կազմակերպչական հատկանիշները:

Գործարարների անձնային առանձնահատկությունների կարևորումը հարցվողներն արտահայտել են մինչև 15-երորդ նշանակության տեղերը, սակայն աշխատանքի քննարկումը ավելորդ չծանրաբեռնելու նպատակով՝ ներկայացրել ենք հետազոտության հիմնական բովանդակությունն արտահայտող արդյունքները, որոնք իրենց գիտական նշանակությամբ մեր կարծիքով արտացոլվում են ստացված արդյունքների առաջին հինգ տեղերի արտահայտվածության ցուցանիշներում: Անշուշտ այս սխեման քարացած չէ, սակայն հարցվողների անձնական փորձն ու բիզնեսում ունեցած նրանց աշխատանքային փորձը հուշում է փոխակերպվող հասարակությունում գոյություն ունեցող անհարմարությունների բազմազանությունն ու դրանց հետ հարաբերությունների կառուցման ռազմավարությունը, անկայուն սոցիալ-տնտեսական հարաբերությունների պայմաններում գործարար անձանց խորքային հնարավորությունների հետազոտման յուրօրինակ ճանապարհային քարտեզի նախանշման, նորագույն տեխնալոգիաների ներդրման ուղիների մշակման լավագույն մոտոցումների առաջադրմանը:

Այսպիսով՝ փոխակերպվող հասարակությունում գործարար անձանց հաջողությունները պայմանավորող գործոնների ու անձնային առանձնահատկությունների ուսումնասիրմամբ որոշվել է գործարար անձի սոցիալ-հոգեբանական, կամային որակների, կոգնիտիվ գործընթացների ու անձի կազմակերպչական առանձնահատկությունների համակարգը, դրանց կարևորման ու կիրառման հերթականությունը, որպես արդյունավետ գործարարի կոնցեպտուալ մոդել: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս հետագայում հետազոտական ճանապարհով ուսումնասիրելու դրանց միջև գոյություն ունեցող կապերը, մտավոր գործողություններում դրսևորվող օրինաչափությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գևորգյան Ս.Ռ. –Կառավարման համակարգում ծառայողների միջանձնային հարաբերությունների յուրահատկությունները: Բամբեր Երևանի Համալսարանի N3/35 2008թ. էջ 24-31:
2. Акимов О. Ю. Малый и средний бизнес. Эволюция понятий, рыночная среда, проблемы развития Изд: Финансы и статистика Москва 2003 г.
3. Анохин П.К., Очерки физиологии функциональных систем: М. Медецина, 1975, 448 с.
4. Бодров В.А. – Психологический стресс: развитие учения и современное состояние проблемы. –М., Инст. псих-гии. РАН. 1995. -128с.
5. Дикая Л.Г., Махнач А.В. Отношение человека к неблагоприятным жизненным событиям и факторы его формирования. // Психол. журнал, М., 1996, № 3, с. 137-148.
6. Куликов Л.В. – Психогигиена личности. Вопросы психологической устойчивости и психопрофилактики: Учебное пособие. –СПб.: Питер. 2004. -464 с.
7. Леонова А.Б. – Психодиагностика функциональных состояний человека. М.: изд-во Моск. ун-та, 1984. -200с.
8. Леонтьев А.Н., Деятельность. Сознание. Личность. - М., Политиздат, 1975, 286 с.
9. Литвинцева Н.А., Психологический автопортрет. - М., Изд. МГУ, 1996, 303 с.
10. Майерс Дэвид – Социальная психология. –СПб.: Питер, 1997. -684с.

КОНТУРЫ ПСИХОЛОГИЧЕСКОГО ПОРТРЕТА УСПЕШНОГО БИЗНЕСМЕНА В ТРАНСФОРМАЦИОННОМ ОБЩЕСТВЕ

АКОПЯН НАИРА РАФАЕЛОВНА

Професор Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, доктор психологических наук

В трансформационном обществе в процессе преодоления социально-экономических трудностей бизнес-среды от специалистов требуются особые личностные качества. В статье предприняты попытки выявления экспериментальным путем специфических барьеров бизнес-среды, а также социально-психологических детерминантов, обеспечивающих результативность деятельности бизнесменов. В результате проведенного эксперимента проявились компоненты психологического портрета успешного бизнесмена.

SOCIO-PSYCHOLOGICAL DESCRIPTION OF A BUSINESSMAN IN TRANSFORMATIONAL SOCIETY

NAIRA HAKOBYAN

Professor of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Doctor of Psychology

VAZGEN MKRTUMYAN

Researcher of the Chair of Development and Applied Psychology, ASPU

In order to overcome social economical difficulties in transformational society a businessman needs special individual qualities. The article tends to reveal specific troubles and difficulties comming across in business environment, as well as it investigstes the ways of providing effective socio-psychological determinants for businessmen. Based on the survey results the authors try to outline the psychological components of effective businessman profile.